ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տեխնիկական հսկողության ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

31.07.2020թ. **ժամը 12:30-ին**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Ստեփանյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/

Խորեն Մնացականյան /գնահատող/

Արմեն Հակոբջանյան /բացող/

Սամվել Մուսոյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Պայմանագրի կնքման գործընթացի մասին

(Ա.Ստեփանյան)

1,1 Ընդունել ի գիտություն

«Ամետիս» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ armeps համակարգի միջոցով 15.07.2020թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն պայմանագրի ներկայացման վերջնաժամկետի ավարտին՝ 29.07.2020թ, վերջինիս կողմից նախարարություն է ներկայացվել կնքված պայմանագրի օրինակները, պայմանագրի կատարման ապահովումը՝ տուժանքի ձևով և որակավորման ապահովման մի մասը՝ կանխիկ փողի ձևով: Միաժամանակ, «Ամետիս» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ Ընկերության տնօրենի և բանկում ֆինանսական գործունեություն իրականացնելու համար լիազորված անձի մոտ ախտորոշված SARS COV-2 վիրուսի պատճառով վերջիններս գտնվել են և շարունակվում են գտնվել կարանտինում և իրենց գործողությունները բանկում գործարքներ կատարելու համար սահմանափակված են եղել, ինչի պատճառով «Ամետիս» ՍՊԸ-ն խնդրել է տրամադրել ևս 2 օր լրացուցիչ ժամանակ որակավորման ապահովման մյուս մասը՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու համար

1.2 Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ կասեցնել պայմանագրի կնքման գործընթացը և մեթոդական օժանդակություն ստանալու համար դիմել ՀՀ Ֆինանսների նախարարություն:

1.3 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ՀՀ Ֆինանսների նախարարությունից պատասխան ստալուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 12:00-ն, ք. Երևան, Կառավարական տուն 2, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 13.08.2020թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Ստեփանյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/

Խորեն Մնացականյան /գնահատող/

Հրանտ Հովսեփյան /բացող/

Սամվել Մուսոյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

2. Պայմանագրի կնքման գործընթացի մասին

2.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.08.2020թ.ստացվել է համապատասխան գրությունը, համաձայն որի առաջարկվում է առաջնորդվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ:

2.2 Հաշվի առնելով, որ «Ամետիս» ՍՊԸ-ն մինչ օրս չի ներկայացրել որակավորման ապահովման մնացած մասը, որը վերջինս իր գրությամբ պարտավորվել էր ներկայացնել սահմանված ժամկետից 2 օր ուշ, որոշում է կայացվել, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.5017թ.Թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը, զրկել «Ամետիս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից:

2.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ կետի 4-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

2.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.5017թ.Թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ «Ամետիս» ՍՊԸ-ի տվյալները՝ ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Գնահատող հանձնաժողով՝

_____ Արմինե Ստեփանյան /նախագահ/

_____ Լուսինե Իգիթյան

_____ Խորեն Մնացականյան

_____ Հրանտ Հովսեփյան

_____ Սամվել Մուսոյան

_____ Աննա Սիմոնյան /քարտուղար/